

891. 71

f-78

3361

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳԼԱՎԱՌԱՆՈՅՈՒՄ

ՊՐՈՓ. Մ. ԲԱԳԴՆԱՌ

ԱՐԺՈՒՒ
ՄԱՐԺ-ՄՈՒՆԻՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

X

Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանցի

Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.

Տպարան Պ. Շարանի. | Тип. М. Шарадзе.

1892

1014

20 03

358

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է ԿԵՆԴՐ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

ՊՐՈՓ. Մ. ԲՈԳԵՆՈՎ

891.71-3

F-78

ԵՐԺՈՒՆԻ

ՄԱՐԿԺԱՌԻՐԸ

— Գ Ե Զ —

X

Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանցի

1002
891.71-3



Թ. Ի. Ֆ. Լ. Բ. Ս.

Տպարան Ս. Շարանի. | Тип. М. Шарадзе.

1892

80 05 14

80 11



ԱՐԾՈՒԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ



Թէ դուք եղած էք կենդանաբանական պարտիզում, անշուշտ ձեր հետաքրքրութիւնը գրաւած կլինեն—բոլոր գազանների թագաւոր հզօր առիւծը, կատաղի վագրը, փղերը, կապիկները, գեղեցիկ ֆասիաններ և այլն, մէկ խօսքով այն ամեն կենդանիները, որոնք հռչակուած են իրանց ուժով, հասակով, գեղեցիկութեամբ կամ ուրախ շարժումներով: Միևնոյն ժամանակ, ես հաւատացած եմ, որ դուք մինչև անգամ չէք նայել այն լուռ էակներին, որոնք ամբողջ օրերով անշարժ նստած են իրանց նեղլիկ վանդակներում: Դուք մօտեցած կլինէք այդ բանտերից մէկին—Հա՛, այստեղ արծիւներն են — կասէիք ու կ'հեռանայիք: Դ՛ զո՛ւր. լետ դարձէք արծուի մօտ. ակնապիշ նայեցէք այդ հը-

Дозволено ценз. Тифлисъ, 28!Апрѣля 1892 г.

Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

պարտ էակին: Անշարժ, ինչպէս արձան, նըստած է արքայական թռչունը, գլուխը մէկ կողմ քաշ գցած, իսկ նորա սրտոտես աչքը յամառութեամբ մի բան է որոնում երկնային տարածութեան մէջ: Եւ այսպէս շարունակուում է ամբողջ ժամէր և օրէր: Ի՞նչքան մտքեր կանցնեն այս ահամայ երազողի գլխում: Սակայն հետաքրքրական է իմանալ, ինչու արծիւը բարձր է նայում, ինչի՞ մասին է մտածում ամբողջ օրերով: Նայեցէք—նորա աչքերը փալաւտակեցին, մի խռպոտ ճիչ դուրս թռաւ նորա կրծքից, թափահարեց իւր ուժեղ թևերը, մի վայրկեան էլ—և արծիւը կարծես թէ պիտի թռչէր ոստի վրայից. բայց թևը զարնուեցաւ երկաթէ վանդակին. խեղճ թռչունը, կարծես սթափուելով, կամացուկ թևերը ժողովեց և նորից նստեց անշարժ, խորասուզուելով իւր խոր մտածմունքների մէջ: Եթէ դուք հետեւած լինէիք արծուի հայեացքին, կհասկանայիք նորա յուզմունքի պատճառը. բարձր՝ երկընքում սլանում էր բաղերի մի երամ: Եռաց արծուի սիրտը, կցանկար նա թռչել դէպ 'ի վեր... բայց շատ ամուր էր երկաթէ վանդակը: Ուռաւ խեղճը և մտածմունքի մէջ ընկաւ:

Նա իշեց լայնարձակ Վօլգա-գետը: Ժայ-

ռոտ սփին, լեռան գլխին, կանգնած է հսկայկաղնին, իսկ նորա գանգուր գազաթին արծուամարիի բունը: Այնտեղ նստած է նա իւր հարագոտի հետ մէկտեղ և նայում իւր շուրջ: Սքանչելի է թւում աշխարհը: Ահա, Վօլգայի միւս կողմը, հեռուից կանաչին են տալիս մարգագետինները. լճակներն ու ճահիճները նոցա կանաչ գոյնը երփներանգ են փայլեցնում: Այնտեղ արծիւն ու արծուամարին պտոյտքում են բարձրում մարգագետինների վրայով. իսկ արծուիկները շարունակ նայում են նոցա ետևից: Մոզն ընկած է արդէն, իսկ արծիւները տակաւին պտոյտներ են անում: Հովիւները քշեցին հօտերը ջուր խմելու: Չու, — ճչաց արծիւն ու շեշտակի, թևերը ծալելով, ընկաւ ներքև: Երկրին մօտ է նա արդէն, թփի ետևից չէ երևում, ահա բարձրանում է,—ճիրաններում սպիտակ բան բռնած: Մուտով, ո՛հ, շատ շուտ, ի՞նչ ուրախութիւն, խընճովք կլինի. նա քարշ է տալիս մի գառնիկ, և արծուիկներն աղաղակ բարձին մի անգամից:

Այսպէս միմեանց ետևից անցնում էին ուրախութեան օրերը: Ծնողներն իրանց մանրիկ ձագուկներին փայփայում ու սննդում էին երբեմն սագով, արօսով, երբեմն գառնուկով, երբեմն նապաստակով, երբեմն բաղով: Եւ չը-

գիտէին թէ ի՞նչ է քաղց ասած բանն աշխարհիս երեսին: Բայց բաղդը շուռ եկաւ. մի օր միևնույն կաղնուն մօտեցաւ գիւղացին. «Ա՛յ դուք, աւազակներ, ահա թէ որտեղ է եղած ձեր բունը: Դեհ, լաւ, սպասեցէ՛ք» ու մօտեցաւ կաղնուն: Բարձրացաւ բնի մօտ և արծուիկներին բարձրից ցած շարտեց: Կաղնուց նա ցած եկաւ և արծուիկներին քարշ տուեց տուն: Արծուամարին անբաղտութիւնը որ տեսաւ, աղմուկով յարձակուեցաւ գողի վերայ, ճիրաններն իջեցրեց դէպի նա. բայց չ'յաջողեց ձագերն յետ խլել, միայն գլխարկը մնաց ճիրաններում: Գիւղացին առաջ էր հասկացել նորա միտքը և վաղօրօք փայտ էր վերցրել իւր հետ: Հէնց որ արծուամարին յարձակում էր նորա վերայ—նա փայտը շարժեց, և թռչունըն անգոր եղաւ օգնել: Այլ հետեւեց գիւղացուն մինչև գիւղը և այնտեղ, մի ճայտակ յափըշտակելով, յետ թռաւ:

Յիշում է արծիւը, թէ ինչպէս յետոյ թուրքերի ձեռքն ընկաւ կրթուելու համար. թէ ինչպէս փայտի վերայ ման էին ածում նորան տենչանքով, ո՛չ կերակրում էին և ոչ էլ թույլ տալիս որ քնի, ի՞նչպէս կապեցին նորա ճիրաններն ու աչքերը: Եւ այնքան մանածին, մինչև որ վայրենութիւնը բոլորովին թողեց և

կանչելիս մօտ էր վազում ձեռքից կերակուրն առնելու: Իսկ այնուհետև թուրքը տարաւ նորան անապատ և այնտեղ ծախեց շրջադէպ իսկուհի վերայ:

Իսկուհի մօտ նորա կեանքը բոլորովին փոխուեցաւ: Նա առատ էր կերակրում. փայփայում, մաքրում էր, ման էր ածում անապատում, և ինչպէս մի սպասուհի քարշ էր դալիս նորա հետ: Այսպիսի կեանք վարելով մեծացաւ արծիւը. նորա փետուրները փայլ ստացան և աչքերն աշխույժ: Սակայն երկչոտ մնաց, ինչպէս մի մանուկ. Իսկուհի մի քաջ չէր հեռանում: Հէնց որ Իսկուհի թամքում էր իւր ձին, արծիւը թամքի ծայրին էր և երկուսով զբօսնում էին անապատում: Մէկ անգամ միայն, արդէն աշունք էր, առաւօտեան վաղ: Իսկուհի զնում էր անապատ արծուի հետ միասին, իսկ հեռու, բարխանի ետեւից, մի աղուէս աչքի ընկաւ: Ինչ ըստէին աչքի ծածկոցը նա վերցրեց արծուից, թամքից վերցրեց, բարձրացրեց, և ցոյց տուեց նորան զազանը: Մի վայրկենից յետ արծիւն իրան բոլորովին ազատութեան մէջ զգաց, իսկ Իսկուհի երկար վազվրդեց աղուէսի ետեւից: Բորբոքուեցաւ արդէն արծուի սիրտը: Բարձրացաւ երկրից և սլացաւ ու սրացաւ դէպի վեր: Եւ նորա տակ ա-

ւելի ու աւելի լայնարձակ բացուեցաւ անապատի ընդարձակութիւնը: Ահա Իսէտը ձի հեծած հալածում է աղուէսին: Հէնց որ արծիւը տեսաւ, թուերը ծալեց ու շեշտակի դէպի վայր խոյացաւ: Մինչդեռ աղուէսը արծուին կը նըշմարէր, նորա ճիրանների մէջ զգաց ինքն իրան: Իսկոյն Իսէտը վրայ վազեց. փայփայեց, գգուեց արծուին, նստացրեց թամբի վերայ, և աղուէսի լեարդ տուեց նորան: Եւ այս գըգուանքը հաճելի էր արծուին, չէ որ հօր պէս սիրում էր նա Իսէտին:

Երկար տարիներ անցկացրեց նա ղըրղըզի մօտ: Շատ աղուէսներ, գայլեր, Թաթարստանի աղուէսներ, ընձուղտներ որսաց նա Իսէտի համար: Եւ սա աղքատութիւնից հարստացաւ, աճեցին նորա ձիերի ջոկերն ու ոչխարների հօտերը: Իսկ անպէհեր արծուի հռչակն ամբողջ անապատում տարածուեցաւ: Յաճախ գալիս էին Իսէտի մօտ հեռաւոր երկրներից ղըրղըզներ, արծիւը տեսնելու, նորա անվահերութիւնն իմանալու. և արծիւը զարմացնում էր նոցա, թէ ինչպէս գայլերին յափըտաւում էր, որպէս նապաստակներ, ու խեղտում իւր ճիրանների մէջ: Բայց մի անբաղտութիւն պատահեց, ինքը Բայմուրզա սուլթանն եկաւ Իսէտի մօտ և թախանձեց, որ

արծիւը ծախէ,—առաջարկեց իւր ջոկից մի ընտիր ձի, երկու ուղտ և գառների ամբողջ հօտ: «Նա հարուստ չեմ, սուլթան, ասում է նորան խեղճ Իսէտը,—եթէ ուզում ես, իմ ձիերուս ջոկն ու ոչխարների հօտն էլ ան քեզ. վեր ան նաև իմ վաչը. իսկ արծիւս ես կենդանի գլխով չեմ տալ: Նա ամեն բանից թանգ արժէ ինձ համար աշխարհիս երեսին»:

Զայրացաւ սուլթանը: «Եթէ այդպէս է՝ միտդ պահիր ուրեմն, այ շուն, որ դու վրստահացար մերժել սուլթանի խօսքը», և իւր խմբով հեռացաւ անտեղից. միայն թող վեր ելաւ անապատում նոցա ետևից: «Ե՛հ, փորձանքն անցաւ», մտածեց Իսէտն ու գնաց անապատ որս անելու: Բայց հազիւ թէ թարքել էր ընձուղտը, երբ սուլթանը բարխանի ետևից յարձակուեց: Նա մտրակով զարկեց Իսէտի երեսին. ողորմելին թաւալուեցաւ հեծեծալով: Նա վրայ ընկաւ արծուին: «Ըհը՛, իմն է վերջապէս», և բռնեց արծուի ոտնակապերից: Նանապարհին ուշքի եկաւ արծիւը, տեսաւ անշնչացած Իսէտին արիւնաթաթախ գետնին ընկած: Զարհուրելի կատաղութեամբ թռչունը դուրս թռաւ ձեռքից և իւր ճիրանները բոլոր ուժով դարձրեց սուլթանի դէմքին: Որքան էլ աշխատեց սուլթանը, բայց

ազատուել չկարաց և արծուի ճիրաններում
իւր շունչը փչեց: Բայց արծուի վրէժխնդրու-
թիւնն աւելի հերուն գնաց: Իւր սուր կը-
տուցով փորեց նորա կուրծքը, հանեց սուր-
թանի սիրտը և կերաւ: Նայեցաւ իւր շուրջ,
թափուր էր անապատն առանց Իսէտի: Պտը-
տեց, պտտեց նորա դիակի շուրջն և սլացաւ
ամպերի մէջ՝ իւր վիշտն ամոքելու: Հրաշալի
երևեցաւ նորան աշխարհը վերևից. առաջին
անգամն էր նա այդպէս բարձր թռչում: Իւր
տակը տիրում էր լռութիւն և անապատի դա-
ժանութիւն, — վաղուց նա հաշտուած էր սո-
րա հետ, բայց հեռուում ուրիշ աշխարհ էր
երևում. այնտեղ բլուրներ ու անտառներ,
գիւղեր ու արտեր երփներանգ փայլում էին.
նաև դաշտավայրեր. բլուրների մէջ հովիտնե-
րում հոսում էին գետակներ, առուներ ու
առուակներ. փոս տեղերում ձգւում էին լը-
ճեր ու ճահիճներ. նոցա վերայ, մեղունների
պէս, խայտաբղետ խմբերով ճչալով ու ճռուո-
ղելով ոստոնստում էին թռչուններ: Տեսարանի
նորութիւնը շղթայեց արծուին և դէպ այն
կողմն իւր թռիչքն ուղղեց: Շուտ, հա՛ շուտ,
— ահա հեռուից երևում է Վօլգան. չճանա-
չեց սկզբում նա իւր հայրենին: Յաճ թռաւ
նա դէպի լեռը ու նստեց ժայռի վերայ հան-

գիստ առնելու: Ընդարձակ հեղեղում էր ռու-
սաց հողի ստնտուն, ողողում էր երկար տեղ
մարգերն ու անտառները, և տանում էր հի-
նաւուրց Կասպիին նա իւր տուրքը — երկրի
բոլոր բերքերը: Ահա լողում է հօր կաղնին.
աճել էր նա իսկ և իսկ ափին մօտիկ: Նա կա-
մեցաւ ծաղրել ալիքներին և ծիծաղեց երկու
հարիւր տարի շարունակ: Բայց զօրացան ա-
լիքներն ու կորզեցին կաղնին, և տանում են
նորան դէպի հեռաւոր Կասպին: Իսկ կաղնու
վերայ լողում է մի ուղևոր — գորշ նապաս-
տակը պինդ կպել է ճղների արանքում:

Անթիւ են այն պարգևներն, որ Վօլգան
գարունքին տանում է Կասպիին — դիակներ,
ցախ, նաւակներ, մի խօսքով ամեն բան, ինչ
որ յափշտակում է ալիքը: Իսկ հարաւից նոցա
հանդէպ սլանում են թռչունների երամներ:
Եւ յիշեց արծիւը, որ ինքն էլ Վօլգայի վերայ
է ծնուած: Իսկ և իսկ, ահա և այն ժայռը
— Առուլգ հողաբլուրը, նորա վերայ էլ հի-
նաւուրց կաղնին, ուր նոցա բունն էր: Յըն-
ծութեան ճիշդ արձակեց, այնպէս ճչաց, որ
շուրջը բոլոր վանդակներում լռեցին թռչուն-
ներն էլ, գազաններն էլ: Այդ միջոցին ուշքի
եկաւ արծիւը. նորա առջև ոչ Վօլգա գետը
կար, ոչ ժայռերն ու ո՛չ բուռը, այլ միմիայն

վանդակներ, վանդակներ ու վանդակներ— իսկ
վանդակներից դուրս հարիւրաւոր հանդիսա-
տեսներ: Հէնց այստեղ մենք էլ դորանց մէջ
մոլորուել էինք: Արծուի ճիւղ ամենքին շփո-
թեց, բայց ո՞վ հասկացաւ նորա միտքը:

Ո՞վ արդեօք ձեզանից դուշակեց արծուի
միտքը:



(Վ. Տ.)

2013

